ՆՈՐ-ԴԱՐ

№ 176 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 4 Հոկտեմբերի 1896 Ուրբաթ 4 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 176

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ. Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ատեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ

„Նոր-Դար“-ի խմբագրութիւնը իր նախկին բնակարանից տեղափոխուել է Մուսախեղովի տունը, որը գտնւում է Լոռիս-Մելիքեան փողոցի վրայ, № 19, պատ-հեռագրատան շինութիւնից մի քիչ բարձր հանդիպակաց կողմը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ոխ և վրէժ։
Քրոնիկոն.—Փակ դպրոցներ։ «Արեւելք» լրագրի դադարումը։ Թիֆլիսի քաղ. խորհուրդը։ Ընդհանուր մարզահամար։ Գոգոլեան կամ։ Նշանագրեալ ուսուցիչների համար։ Հնդկաստանից ճանապարհ։ Բամբուկի ճահիճները։ Մըցախէթի ուխտը։
Ցաւալի երեւոյթ։
Մամուլի շաբաթը։
Թղթակցութիւններ.— Ադրահան։
Քաղաքական. Թրքական գործեր։ Քաղաքական լուրեր։
Հեռագրներ.
Բանասիրական.—Ժողէֆ Կէմբըլ։
Տիզեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 3 հոկտեմբերի 1896 թ.

ՈԽ ԵՒ ՎՐԻԺ

«Նոր-Դար»-ի երեկուայ համարում լոյս տեսած Նոր-Նախիջեւանի թղթակցութիւնը մի շատ նշանաւոր երեւոյթ է մերկացնում մեր առաջ՝ որը ոխակալութեան ու վրէժխնդրութեան հետեւանք է։

Չէնց մանաւոր կետերում թէեր մի խոշոր պակասութիւն է, որ ցոյց է տալիս այդ յատկութիւնն ունեցող մարդկանց բարոյական տարօրինակ տունը և ուրիշ ոչինչ։ Դա ցոյց է տալիս նրանց դեռ բարոյապէս վայրենի դրութեան մէջ գտնուելը—որ յոգնած մարդու համար օրէնքն և արդարութեան ընկերութիւնը ոխակալութիւնից աւելի բարձր են կանգնած։

Մինչդեռ կիսակիրթ մարդը մեզ է համարում անձամբ վրէժխնդիր չլինելը, քաղաքակրթուածը իր զրկուածութեան վրէժը լծակնում է ընդ միշտ հատատուած արդարութեան առեանին, այն է, դատաստանին։ Եթէ այդ չլինէր, այն ժամանակ քաղաքակիրթ հասարակութեանն էլ նոյն Սոդոմ ու Գոմորը կըսեփէր, ինչ որ տեսնում ենք զուլումների և աշանտիների մէջ։

Մանաւոր գործերում ու յարաբերութիւններում ոխակալութիւնն ու վրէժառութիւնն իրենց բոլոր վատ հետեւանքներով երբէք այն վնասը չեն կարող առաջ բերել, ինչ որ հասարակական գործերում ու պաշտօնական յարաբերութիւնների մէջ։ Այդ պատճառով էլ քաղաքակրթուած հասարակութեան մէջ, թէկուզ օրէնքն այդ անախորժ երեւոյթների առաջն առնում է, այնուամենայնիւ հասարակութիւնն էլ իւր գործերի դեկը յանձնում է այնպիսի անձերի, որոնք թէ կրթութեամբ և թէ բնաւորութեամբ բարձր են ոխակալութիւնից ու վրէժխնդրութիւնից։ Գալով բան է, որքան հասարակական գործիչն աւելի անաչառ լինի, որքան նա մոռանայ իւր անձը հասարակաց չահերի համար, որքան նա յետ մղի իւր անձնական մանր-մունր հաշիւները և առաջնութիւն տայ հասարակաց չահին, այնքան աւելի օգտակար կըլինի նրա գործունէութիւնը այն հասարակութեան համար, որի գեկավարն է նա։

Այս պարզ ճշմարտութեան կարեւորութիւնը մանաւանդ պէտք է աւելի ղգան մեր հասարակութեան գեկավարները, որոնց մէջ ուրիշ բազմաթիւ պակասութիւնների հետ արմատացել է ոխակալութեան ու վրէժխնդրութեան կործանիչ հոգին։

Միթէ այդ բանի հետեւանքը չէ, որ այսպիսի սուր կերպարանք են առել մեր մէջ կուսակցական կռիւները. միթէ պրանից չէ որ անպտղութեան են դատապարտուած մեր ընկերութիւնները...

Եղիսկոպոսը գառնում է տեղակալ և սկսում է հալածել իւր անձնական թշնամի-մի վարպետի. վերջինս բազդի բերմամբ գառնում է առաջնորդ և իւր վրէժը լծում է իւր սատարպետի վրայ և այդպէս շարունակւում է։

Նոյնն ենք տեսնում պրականութեան, մամուլի, ընկերութիւնների և ժողովների մէջ։

Իսկ ով է տուժում. տուժում է այն հասարակութիւնը, որը միամտարար կամ անմտարար դրանց ձեռքն է տուել իւր գեկը, հասարակական գործերը։ Սա մի վնասակար ախտ է, որի առաջը պէտք է առնել փութով։

Լաւ հանդիստասես լինելով, զբաղուելս խնամարհելով բան չի դուրս գալ։ Որքան որ դատապարտելի են մեր գեկավարների այդ պակասութիւնները, նոյնքան էլ անհնարելի է մեր անտարբերութիւնը դէպի այդպիսի առաջնորդները։

Հոկտեմբերի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում 3 ր. 50 կ.։

ՔՐՈՆԻԿՈՆ

Փակ դպրոցներ։ Կ. Պոլսից մեզ հաղորդում են, որ նեղկայսեր այնտեղ թէ ազգային և թէ մասնաւոր բոլոր հայ դպրոցները փակ են։ Մեզպուրեան ազգկանց դպրոցը փակուած է չվճարացուելու պայմանով։ Ռէթէոս Պերպէրեանը, որ Կ. Պոլսում մասնաւոր առաջնակարգ դպրոցներից մէկի տէրն էր, գնացել է Զուիցերիա իւր հետ տանելով Պոլսի հայ երեխաների մի քանի զաւակները, որոնք այնտեղ բարձրագոյն կրթութիւն պիտի ստանան, իսկ ինքը պիտի պարապէ նրանց հետ հայերէն։

—

«Արեւելք» լրագրի դադարումը։ Կ. Պոլսից մեզ հաղորդում են, որ կառավարութեան հրամանով «Արեւելք» լրագրի հրատարակութիւնը դադարեցրած է։ Ասում են, որ այդ բանում խառն է Նուբարեան էֆէնդու մատը։ Այդ միևնոյն էֆէնդու գործակցութեամբ հայերէն մի նոր թերթ պիտի հրատարակուի «Բիւզանդիոն» անունով, որ, յայտնի բան է, թրքասիրական ուղղութիւն պիտի ունենայ, Քէչիեանի խմբագրութեամբ։ Քէչիեանը «Արեւելք»-ի խմբագրապետն էր և այդ լրագրի դադարումից մի տասնհինգ օր առաջ արդէն թողել էր իւր պաշտօնը։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը իւր սեպտ. 30-ի նիստում քննեց հետեւեալ առաջարկութիւնները՝ ա) եկեղեցւոց մասնաժողովի առաջարկութիւնը քաղաքային վարչութեան նոր, չորրորդ անդամի մասին բ) Ա. Ս. Բարովի առաջարկութիւնը՝ կազմել մշտական ֆինանսական յանձնաժողով, որ տեղեակ լինի քաղաքային հոլմուտքին և գ) Ն. Ա. Խուդադովի առաջարկութիւնը-վերջնել քաղաքային լուսաւորութիւնը կապալառուների ձեռքից և յանձնել քաղաքային վար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂԷՖ ԿԷՄԲԼ

Ճանապարհի իրեղէններս արդէն հաւաքել էի և երեկոյեան գնացքով մտադիր էի մեկնել Լոնդոնից, սակայն բոլորովին անսպասելի կերպով մէկ օր ևս մնացի Անգլիայի մայրաքաղաքում։

Ինձ հարկաւոր եղած բաները գնել վերջացնելուցս յետոյ մտայ բարեկամիս մօտ՝ հրաժեշտի ողջոյնս տալու նրան, բայց նա գրականապէս յայտնեց, որ չի թողնիլ ինձ հեռանալ Լոնդոնից, մինչև որ կոյրերի ճեմարանը չտեսնեմ։

— Ներելի չէ, ամօթ է չերթալ չտեսնել կոյրերի դպրոցը, այդ օրինակելի հաստատութիւնը... Դրա նմանը ուրիշ ոչ մի տեղ չէք տեսնիլ. յաջող դէպքից պէտք է օգուտ քաղէք. ով գիտէ, գուցէ միւս անգամ Անգլիա չպատահէք։ Այսօր իմ ազատ օրս է և հենց այսօր էլ միասին կերթանք այնտեղ։ Հեռու չէ— մի ժամուայ ճանապարհ է...։ Իսկ վաղը —բարի ճանապարհ —կարող էք թողնել Լոնդոնը։ Ես կամենում եմ, որ դուք այդ հաստատութեան վերատեսչի հետ ծանօթանաք։ Դա մի այնպիսի նշանաւոր մարդ է, որ... կարելի է ասել...

Եւ իմ բարեկամս մի առանձին յափշտակութեամբ սկսեց դրուատել վերատեսչին։

Առաջին անգամը չէր, որ սա խօսում էր հետս այդ վերատեսչի մասին. այդ, լրագրներում ևս շատ անգամ կարդացել էի այդ գործակատարական մանկավարժի գործունէութեան մասին։ Դա մի հազուագիւտ եռանդի տէր մարդ է, որի կեանքը լի է եղած մի ամբողջ շարք անյաջողութիւններով, սակայն՝ չնայելով իւր կրած տառապանքներին և ստացած հիասթափութիւններին՝ նա մնացել է բարի և անյիշաչար, որ շատ քչերին է յաջողւում։

Խոստովանում եմ, շատ անյօժար ընդունեցի բարեկամիս առաջարկութիւնը և սիրտս պնդացնելով հետևեցի նրան դէպի կոյրերի դպրոցը։

Կոյրեր, ի հարկէ, տեսած էի. մինչև անգամ մի ծանօթ կոյր երաժիշտ էլ ունէի, որի վրայ միշտ ցաւելով էի նայում. այո, ցաւում էի, երբ տեսնում էի նրա մատները կերպարանքը, նրա երեսուն քայլուածքը, նրա հաստ փայտը, որի տերպակին թքթքոցից իմացւում էր կոյրի գալուստը։

Աչքերի լոյսը կորցնելուց էլ սարսափելի բան կայ արդեօք աշխարհիս երեսին։ Չտեսնել արեգակը, չվայելել բնութեան տեսարանների բազմազան գեղեցկութիւնները, դուրկ լինել մարդկանց տեսութիւնից, չճանաչել ազգականներիդ և սիրելիներիդ դէմքը-սրանից էլ աւելի կսկծելի բան կարող է լինել արդեօք։

Ամբողջ ճանապարհին տխուր տրամադրութեան մէջ էի։ Չոգեկառքի պատուհանները բաց էին։ Ամպրային արեգակը պայծառ լոյս էր տարածում չորս կողմը։ Դործարանները և գործատները արագապէս անյայտանում էին և նրանց փոխանակում էին արտերն ու անտառները. կանաչ բուսականութեան միջից սպիտակին էին տալիս տները. տեղ-տեղ ցոլանում էր գետը. չոգեկառքից բարձրացող սև ժապաւէնի նման ծուխը դունատուելով՝ նոսր ամպի պէս փռւում և անյայտանում էր երկնքի կապուտակում։ Անձրևից գոյացած լճակներում խաղում էին տղայքը, նրանցից չարաճճիները վազվզ ընկնում էին գնացքի յետևից։ Մի չէկ, կարմրայտ տղայ համարեա հինգ րոպէ վազում էր մեր յետևից և մի ինչ որ բան էր կանչում։

Բարեկամս չարունակ պատմում էր ինձ կոյրերի դաստիարակութեան և ճեմարանի մէջ տիրող կարգ ու կանոնի մասին։

—Ի դուր յայտնեցի, թէ կոյրերի մօտ եմ տանում ձեզ. պէտք չէր ասել. դուք, անկասկած, տեսնողների տեղ կընդունէիք նրանց։ Կոյրերին այստեղ սովորեցնում են իսկ և իսկ այնպէս ինչպէս առողջ աչքեր ունեցողներին։ Մանկութիւնից են ընտելանում նրանք առանց օտարի օգնութեան գործ անելու. նրանք սոխրուած մատանում են իրենց կոյր լինելը. պարապում են մարմնամարզութեամբ և ֆիզիկական ճարպիկութիւն պահանջող տեսակ-տեսակ խաղերով։ դուք անձամբ կըտեսնէք, թէ որպիսի չարաճճի տղայք կան և նրանց մէջ։ Այնպիսի օյինբազութիւններ են անում, որ կարծես չորս աչք ունենան։ Ձեմարիտ, մարդ հիացած է մնում դրանց վրայ նայելով։ Ես գիտեմ, դուք գոհ կըլինիք և շնորհակալութիւն կըյայտնէք ինձ, որ պատճառ եղայ ձեր այնտեղ գնալուն։

Բարեկամիս խօսքերը իրաւացի էին։ Շատ գոհ մնացի կոյրերի դպրոցը գնալուցս։

Այդ դպրոցն ինձ վրայ մի շատ ուրախ տպաւորութիւն թողից, իսկ վերատեսչի անձնաւորութիւնը ամենավառ գոյներով զրոշմուեցաւ յիշողութեանս մէջ։

Եւ այժմ, կեանքիս դառնագին րոպէներին, երբ՝ պատահելով կեանքի բազմատեսակ ձախորդութիւններին, եռանդս պակասում է և ինքս յուսահատութեան մէջ եմ ընկնում, այդպիսի րոպէներին այդ յիշողութիւնն է, որ մխիթարում և յուսադրում է ինձ։ Այդ քրտնաջան աշխատաւորի կեանքի պատմութիւնը յիշեցնում՝ իսկոյն անցնում է. փոքրոգութիւնս՝ տեղի տալով համբերութեան։

Մի շատ սրտաշարժ և հարցասիրութեան արժանի պատմութիւն է այդ, որը հաստատակամութեան և եռանդոտ գործունէութեան կատարեալ օրինակ կարող է լինել։ Անհատական կրպատմիմ ձեզ այդ պատմութիւնը։

Ազգով ամերիկացի Ժողէֆ Կէմբըլը ծնուել է 1834 թ. Տէննեսի նահանգում։ Դեռ երիկ տարեկան հասակում նրա գլխին մի դառն փորձանք պատահից։ Պարտիզում խաղացած ժամանակը նա անզգուշաբար ընկաւ ակացիայի թփի վրայ և աչքը փուշ մտաւ, բայց այնպէս խորը, որ առանց բժշկի անկարելի էր հանել, իսկ բժիշկը մերձակայ քաղաքումն էր։ Սկսեց երկու աչքերի բորբոքումն և երբ բժիշկն եկաւ, բանը բանից անցել էր արդէն։ Բորբոքման հետեանքն եղաւ այն, որ մանուկը զրկուեցաւ զոյգ աչքերի լոյսից։ Վշտահար ծնողքը շատ էին երես տալիս փոքրիկ կոյրին և նրա բոլոր ցանկութիւններին իսկոյն կատարումն էին տալիս։

Իւր յիշատակարանում Ժողէֆ Կէմբըլը պատմում է, թէ ինքը վերին աստիճանի չար տղայ է եղած, թէ իւր չարութիւններն ու օյինբազութիւնները թիւ ու համար չեն ունեցած. բայց և այնպէս նա մի անգամ է միայն պատժուել և այն՝ ուրիշի տեղը։ Մի անգամ նա եղբայրների հետ խաղալիս է լինում կալում. եղբայրներն իրենց մէջ վէճի են բռնւում, որ ապա կռւի է փոխւում։ Փոքրիկ Ժողէֆը խնդրում է, որ դադարին կռւելուց, բայց լսող չի լինում նրան։ Վերջ է հասնում հայրը, որ շատ տաքգլուխ մարդ էր. առաջին ձեռն ընկնողին սկսում է անխնայ ծեծել։ Եղբայրները փոքրիկին օգնութեան հասնելով՝ սկսում են կանչել.

— Այս Ժողէֆն է, խեղճ Ժողէֆն է։

Հայրը քիչ էր մնում, որ արտասուէր. այս դէպքը շատ վշտացրեց նրա ընտանիքին։ Մենակ ծեծ ուտողը ամենևին ուշադրութիւն չդարձրեց իւր կրած պատժի վրայ, այլ ընդհակառակը, նա շատ ուրախ էր, որ իւր վրայ ևս նայում են այնպէս, ինչպէս և միւս եղբայրների վրայ և նրանց հաւասար պատիժ են տալիս իրեն։

Նա շատ դժգոհ էր, որ իրեն հետ այլապէս են վարւում, քան թէ եղբայրների հետ. նա շատ անբաւական էր, որ իրեն խնայում են, որ իրեն տնային աշխատանքի չեն դնում։ Երբ Ժողէֆը դեռ ութը տարեկան էր, ծնողքը չբաւարութեան մէջ ընկան։ Ձգեց կալուածքից, որ շրջապատուած էր գեղեցիկ փոքրիկ անտառով, նրանք այժմ տիպասած էին տեղափոխուել լեռների մէջ շինուած մի փոքրիկ տնակ։ Հայրն ու մայրը առաւօտուանից մինչև երեկոյ բանում էին, մեծ եղբայրներն էլ օգնում էին նրանց։ Ժողէֆն էր մենակ, որ ոչինչ չէր անում, որովհետև նրան արգելում էին։

Գործ սիրող և ծիր մանուկը անզօր-

Ի՞նչ է ասում նա։

Ասում է, որ ինքը ոչ մի կերպ չի կարող հավատալ, որ ես ինձ համար ուրիշ կին չեմ գտնի։

Ես ուզում էի ասել, որ ինքը ոչ մի կերպ չի կարող հավատալ, որ ես ուրիշ կին չեմ գտնի, որ ինձ հետ ամուսնանամ։

Ես ասացի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ս. «Արեգ» Լիտ.-ի ատենի, Երևան։ Ձեր նամակը ստացանք։ Ցավում ենք, որ մեզ չեք տեղեկացնում, թե ինչպես է ընթանում Ձեր գործը։ Ցանկալի կլիներ, որ Ձեր նամակը ստանայինք մի քանի օրով առաջ, որովհետև մեր թերթը 30 ապրիլին է լույս տեսնում։ Ուրեմն, եթե Ձեր գործը մինչև ապրիլի 15-ը չի լրանում, ապա մեզ հարկավոր է ստանալ Ձեր նամակը մինչև ապրիլի 10-ը։ Ինչ վերաբերում է Ձեր հարցին, ապա պետք է ասենք, որ Ձեր գործը ներկայումս գտնվում է Վերին դատարանում։ Ուրեմն, Ձեր գործի վերջնական լուծումը կախված է Վերին դատարանի վճռից։ Ինչ վերաբերում է Ձեր հարցին, ապա պետք է ասենք, որ Ձեր գործը ներկայումս գտնվում է Վերին դատարանում։ Ուրեմն, Ձեր գործի վերջնական լուծումը կախված է Վերին դատարանի վճռից։

*Ս. Ա. Ա. Ա

„ՕՐՄՈՑԱՆ ԾԵՐՄԱՐԱՆ“

ԱՂԱՐՉԱՀՈՒՅՍ ԲԱՑԱՎ

ԱՐՏ. Ց. ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲՈՒԺՎՈՒՄ Է

ԱՄԵՆԱՅՆ ՏԵՍԱԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

ՀԱՄԱՐ

ՊԱՏՎԱՍԱՆ ԵՂԵՂԱՓՈԽՄԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՆ ԵՎ ՀԱՅՈՑ

ԱՐՎԵՍՏԻ

ՀԱՄԱՐ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՍԿԶԲԱՎՈՐՎՈՂ ՀԱՐՈՒՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ